



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒԻ ՄԱՐԶԻ  
ԲԱԶՈՒՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք,  
ԼՈՒՈՒԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՂ ԲԱԶՈՒՄ 1 ՓՈՂՈՑ ԹԻՎ 2, Հեռ. (0322)  
64109 , bazum.lori@mta.gov.am

N 016/138  
12 ապրիլ 2019թ.

**ՀՀ ԼՈՒՈՒԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ  
ՄԱՐԶՊԵՏ  
ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ**

Կից ներկայացնում ենք Բազում համայնքի ղեկավարի թիվ 27-Ա որոշումը:

Առդիր՝ 1 էջ

12.04.2019

X

Ս. Զարուբյունյան  
Չամայնքի ղեկավար

**ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒՄԱՐԶԻ  
ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք  
ՀՀ. Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ԱՊՐԻԼԻ 2019թվականի N 27-Ա

06-023-0008-0005 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏԵՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ  
ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆՊՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Պավլե Ծատուրյանի դիմումը, հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 02.05.1991 թ-ի թիվ 2 որոշումը, 02.11.1985 թ-ի տեխնիկական անձնագիրը «ՀԵՆԵՔԱ» ՍՊԸ-ի կողմից հաստատված հատակագծերը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածով, ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ մասով, իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, ինքնակամ կառուցված շենքերի, ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին ՀՀ ՀՕ 510-Ն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետով, ՀՀ կառավարության 2005 թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ՝ «Նորմատիվ Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37 հոդվածի 1-ին մասով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

- Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել 06-023-0008-0005 ծածկագրի տակ գտնվող 0,30105 հա բնակելի կառուցապատման և սպասարկման հողամասի և հողամասում գտնվող այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներ իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 1974-1990 թթ-ին կառուցված 197,49 քմ մակերեսով բնակելի տան, 1974-1990 թթ-ին կառուցված 88,03 քմ անասնագոմի, 1974 թ-ին կառուցված 73,51քմ բաց պատշգամբի, 1990 թ-ին կառուցված 21,21 քմ ծածկարանի նկատմամբ Պավլե Կարապետի Ծատուրյանի /ծնված 1940 թ/ սեփականության իրավունքը:
- Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:
- Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասից հատկացված հողամասն անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել, իսկ հատկացվածից ավել զբաղեցրած հողամասի նկատմամբ օրենքի ուժով ճանաչել Պավլե Կարապետի Ծատուրյանի /ծնված 1940 թ/ սեփականության իրավունքը:
- Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
- Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ գյուղ Բազում, 2 փողոց թիվ 29:
- Ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2019 թվականի մարտի 23-ի «06-023-0008-0005 ծածկագրի տակ գտնվող բնակելի տան, օժանդակ կառույցների և հողամասի նկատմամբ իրավունքները վերականգնելու մասին» թիվ 23-Ա որոշումը:
- Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռիի մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՍՐԲՈՒՇԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ